ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
55	-	-	-	Հավաքածուն նախատեսված է պոլիմերազային շղթայական ռեակցիայի (PCR) իրականացման համար և իրենից ներկայացնում է օգտագործման համար պատրաստի 5-ապատիկ խտացված (5x) լուծույթ: Master Mix-ը պետք է պարունակի բոլոր անհրաժեշտ բաղադրիչները ռեակցիայի համար, բացառությամբ պրայմերների և ԴՆԹ մատրիցայի (template): Լուծույթի բաղադրությունը պետք է ներառի կայունացված FIREPol® ԴՆԹ պոլիմերազ, dNTP-ների խառնուրդ (dATP, dCTP, dGTP, dTTP), MgCl_2 (մագնեզիումի քլորիդ) և օպտիմալացված բուֆերային համակարգ: Մագնեզիումի քլորիդի վերջնական խտությունը 1x աշխատանքային լուծույթում պետք է կազմի 1.5 մՄ կամ 2.5 մՄ՝ կախված կոնկրետ մոդիֆիկացիայից: Ռեագենտը պետք է օժտված լինի բարձր ջերմակայունությամբ և պահպանի

				իր ակտիվությունը սենյակային ջերմաստիճանում (մինչև +25°C) առնվազն 30 օր շարունակ, ինչը թույլ է տալիս իրականացնել փորձարկումների նախապատրաստումը առանց սառույցի կիրառման: Ֆերմենտը պետք է ունենա 5' դեպի 3' պոլիմերազային ակտիվություն և 5' դեպի 3' էկզոնուկլեազային ակտիվություն, ինչպես նաև ստացված PCR արգասիքների 3' ծայրում ավելացնի A-ելուստներ (A-overhangs)՝ հետագա TA-կլոնավորման համար: Հավաքածուն պետք է մատակարարվի հերմետիկ պոլիմերային սրվակներով, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է որոշակի քանակի (օրինակ՝ 250 կամ 1000) ռեակցիաների համար: Լուծույթը պետք է լինի միատարր և զերծ նուկլեազային (DNase, RNase) աղտոտվածությունից: Մատակարարման պահին մնացորդային ժամկետը առնվազն 2 տարի 1մլ-1հատ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը ազատված է ավելացված արժեքի հարկից, քանի որ ձեռք է բերվելու Appear project 373 Armenia ծրագրի շրջանակներում: (տեղեկանքը կցվում է)

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/61 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
55				